ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2012թ. թիվ 282-Ա

Ա.ԲՐՈՒՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111 հոդվածի 1-ին կետի և 130 հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ալբերտ Բրուտյանին ազատել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» N 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2007 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի «Վիդրոջենյա» N 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ալբերտ Բրուտյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 8-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 24
ք.Վանաձոր